ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Հ-2

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ «ՀՀ ԳԱԱ»), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Սաղյանի (այսուհետ՝ «Կազմակերպություն») որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ «Կողմեր»), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ «Որոշում»), Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ «Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր»)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 15.124.000 (Տասնհինգ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են *(հավելվածներ 1 և 2)*:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. Չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. Ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. Ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. Կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. Աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. Իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. Սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 15.124.000 (Տասնհինգ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 13.914.080 (Տասներեք միլիոն ինը հարյուր տասնչորս հազար ութսուն) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աճի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը *(հավելված 1)*,

գ. Օրացուցային պլանը *(հավելված 2)*,

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը *(հավելված 3)*,

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը *(հավելված 4)*:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ Նախագահություն	ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	ք. Երևան, Գյուրջյան 14
Արարատ բանկ ԲԲԸ	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 1510005175820100	Հ/հ 11500769896800
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 00871944
Նախագահ Ռ. Մարտիրոսյան	*Տնօրեն* Ա. Սաղյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«29» 01 2015 թ.
N 4-2 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ու զարգացման ծրագրի՝

Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Ներկայումս կենսատեխնոլոգիայի, ընդհանուր և կիրառական մանրէաբանության բնագավառի հետազոտությունները հաջողությամբ լուծում են ամենաարդիական գիտատեխնիկական առաջընթացի հիմնախնդիրները:

Հայաստանի մանրէների բազմազանության ուսումնասիրությունը, այդ թվում դրանց մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, բջջաբանական, գենետիկական և սելեկցիոն դասակարգումը, ինչպես նաև միկրոօրգանիզմների տարբեր խմբերի առանձնահատկությունների պարզաբանումը (բակտերիաներ, բորբոսասնկեր, շաքարասնկեր, ճառագայթասնկեր, ջրիմուռներ), հանդիսանում է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Մանրէների ավանդադրման կենտրոն հիմնարկի (ՄԱԿ) հիմնական ուղղությունը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Հավաքածուում կուլտուրաների պահպանման հիմնական պահանջն է հանդիսանում նրանց կենսունակ, մաքուր և առտենտիկ վիճակում պահպանումը: Այդ նպատակով ՄԱԿ-ի գիտական անձնակազմի կողմից կիրառվում են մի շարք մեթոդներ, որոնք կարելի է բաժանել 2 խմբի. շտամների պահպանումը մետաբոլիկ ակտիվ վիճակում՝ պարբերական ցանքսերով, վազելինի յուղի տակ և մետաբոլիկ ոչ ակտիվ վիճակում՝ լիոֆիլիզացիա և կրիոկոնսերվացիա: Պարտադիր պայման է հանդիսանում պահպանման երկու մեթոդների կիրառումը: Հավաքածուում կուլտուրաները պահպանվում են լիոֆիլիզացման միջոցով (բացառությամբ այն կուլտուրաների, որոնց համար այդ մեթոդը պիտանի չէ), իսկ որպես լրացուցիչ միջոց կիրառվում են պարբերական վերացանքսերը և պահպանումը վազելինի յուղի տակ: Մանրէների շտամների մեծամասնությունը պահպանվում է այն միջավայրերում, որոնք առաջարկվել են միջազգային ավանդադրող կազմակերպությունների և հեղինակների կողմից:

Հատուկ ուշադրություն կդարձվի էնթոմոպաթոգեն բացիլների ուսումնասիրությանը, որոնք կիրառվում են արդյունավետ միջատասպան պատրաստուկների արտադրության մեջ և վնասատու միջատների նկատմամբ կայուն տրանսգենային բույսերի ստացման համար: Մեծ ուշադրություն կդարձվի էքստրեմոֆիլ մանրէների ուսումնասիրությանը, այդ թվում

բորբոսասնկերի, որոնք ակտիվ են սինթետիկ պոլիմերային նյութերի և այլ կենսաբանական ակտիվ միացությունների կենսաքայքայման համար:

4. Աշխատանքի բովանդակությունը

Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ընդգրկում են կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառների մի շարք կարևոր ուղղություններ: Մասնավորապես, ծրագրում տեղ են գտել.

Առաջին կիսամյակ՝

- Էնտոմոպաթոգեն աերոբ սպորավոր բակտերիաների հավաքածուի բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի համալրում (շուրջ 1000 շտամ), այդ թվում՝ ֆիզիոլոգա-կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում: Մոլեկուլային գենատիպավորում և ենթատեսակների բնութագրում (ղեկավարներ՝ Մ. Կինոսյան, Կ. Դարբինյան):
- Գիտաարտադրական նշանակություն ունեցող հեռանկարային էքստրեմոֆիլ մանրէների հավաքածուի համալրում՝ ինուլինազային և լակտազային ակտիվությամբ օժտված մանրէներով (100 շտամ) (ղեկավարներ՝ Ն. Ղազանչյան, Կ. Դարբինյան):
- Նոր հեռանկարային կաթնաթթվային բակտերիաների և շաքարասնկերի հավաքածուների համալրում, հատկապես էքստրեմոֆիլ շտամներով (շուրջ 200 շտամ) (ղեկ.՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան):
- Մանրէների Ազգային Հավաքածուի կենսունակության պահպանում և քարտարանի ստեղծում (շուրջ 2000 շտամ) (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն. Ղազանչյան, Ն. Խաչատուրյան):
- Պարբերաբար (եռամսյակը մեկ անգամ) վերացանքսեր, մաքրության և կենսունակության վերարտադրողականության ստուգում՝ սնկեր-կենսաքայքայիչների (մոտ 1000 շտամ), շաքարասնկերի (շուրջ 200 կուլտուրա), կաթնաթթվային և այլ ոչ սպորավոր բակտերիաների (շուրջ 500 կուլտուրա) (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն. Ղազանչյան, Ն. Խաչատուրյան):

Երկրորդ կիսամյակ՝

- Էնտոմոպաթոգեն աերոբ սպորավոր բակտերիաների հավաքածուի բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի համալրում (շուրջ 1000 շտամ), այդ թվում՝ ֆիզիոլոգա-կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում: Մոլեկուլային գենատիպավորում և ենթատեսակների բնութագրում (ղեկավարներ.՝ Մ. Կինոսյան, Կ. Դարբինյան):
- Տիեզերական տեխնիկայի պոլիմերներից մեկուսացված սնկային կենսաքայքայիչ կուլտուրաների բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի մշակում (շուրջ 1000 շտամ): Պահպանման իրականացումը՝ երկարատև և լիոֆիլիզացված եղանակներով (ղեկ.՝ Ն. Խաչատուրյան):
- Գիտաարտադրական նշանակություն ունեցող հեռանկարային էքստրեմոֆիլ մանրէների հավաքածուի համալրում՝ ինուլինազային և լակտազային ակտիվությամբ օժտված մանրէներով (100 շտամ) (ղեկավարներ՝ Ն. Ղազանչյան, Կ. Դարբինյան):
- Նոր հեռանկարային կաթնաթթվային բակտերիաների և շաքարասնկերի հավաքածուների համալրում, հատկապես էքստրեմոֆիլ շտամներով (շուրջ 200 շտամ), տվյալների բազայի ստեղծում (ղեկ.՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան):

- Մանրէների Ազգային հավաքածուի (շուրջ 5000 շտամ) կենսունակ վիճակում պահպանման ապահովումը (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն. Ղազանչյան, Ն. Խաչատուրյան):
- Պարբերաբար (եռամսյակը մեկ անգամ) վերացանքսեր, մաքրության և կենսունակության վերարտադրողականության ստուգում՝ սնկեր-կենսաքայքայիչների (շուրջ 500 շտամ), շաքարասնկերի (շուրջ 500 կուլտուրա), կաթնաթթվային և այլ ոչ սպորավոր բակտերիաների (շուրջ 400 կուլտուրա) (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն. Ղազանչյան, Ն. Խաչատուրյան):

5. Նկարագրված գիտական աշխատանքների արդյունքները կներկայացվեն հոդվածներում և հաշվետվություններում, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում և ՀՀ ԳԱԱ նախագահությունում զեկուցումներով հանդես գալու ձևով:

Տնօրեն՝ Ա. Սաղյան

Հավելված 2
«29» 01 2015թ.
N 24-2 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ու զարգացման ծրագրի՝
«Մանրէների Ազգային Հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը և զարգացումը»

Եռամսյակ	Իրականացվելիք միջոցառումներ				
	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը, ՀՀ հազ.դրամ
1-ին 2-րդ	Էնտոմոպաթոգեն աերոբ սպորավոր բակտերիաների հավաքածու (ղեկավարներ՝ Մ.Կինոսյան, Կ. Դարբինյան)	- բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի ստեղծում: - ֆիզիոլոգա-կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում - Մոլեկուլային գենատիպավորում և ենթատեսակների բնութագրում	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 1000 շտամ:	31.03.2015թ. 30.06.2015թ.	3024,8 3781,0
	Սնկերի հավաքածու (ղեկավար՝ Ն. Խաչատուրյան)	- տիեզերական տեխնիկայի պոլիմերներից մեկուսացված սնկային կենսաբայքայիչ կուլտուրաների բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի մշակում, - երկարատև պահպանում լիոֆիլիզացիայի եղանակով:	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 1000 շտամ:		
	Էքստրեմոֆիլ մանրէներ (ղեկավարներ՝ Ն.Ղազանչյան, Կ.Դարբինյան)	- ինուլինազային և լակտազային ակտիվությամբ օժտված մանրէների հավաքածուի ստեղծում:	Նախատեսված է ստեղծել շուրջ 100 շտամ պարունակող հավաքածու:		
	Կաթնաթթվային բակտերիաներ և	- նոր հեռանկարային կուլտուրաների հավաքածուի ստեղծում,	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 200 շտամ:		

	Շաքարասնկեր (ղեկավար՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան)	- տվյալների բազաների մշակում:			
	Մանրէների պահպանում (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն. Ղազանչյան, Ն.Խաչատուրյան)	- հավաքածուի պահպանում կենսունակ վիճակում	Նախատեսված է պահպանել շուրջ 2000 շտամ:		
		- պարբերաբար վերացանքսեր, մաքրության և կենսունակության վերարտադրողականության ստուգում, եռամսյակը մեկ անգամ՝	Սնկեր-կենսաքայքայիչներ՝ 1000 շտամ, Շաքարասնկեր՝ 200 շտամ, Կաթնաթթվային և այլ ոչ սպորավոր բակտերիաներ՝ 500 շտամ:		
3-րդ 4-րդ	Էնտոմոպաթոգեն աերոբ սպորավոր բակտերիաների հավաքածու (ղեկավարներ՝ Մ.Կինոսյան, Կ. Դարբինյան)	- բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի ստեղծում: - ֆիզիոլոգա-կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում - Մոլեկուլային գենատիպավորում և ենթատեսակների բնութագրում	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 1000 շտամ:	30.09.2015 31.12.2015	3781,0 4537,2
	Սնկերի հավաքածու (ղեկավար՝ Ն. Խաչատուրյան)	- տիեզերական տեխնիկայի պոլիմերներից մեկուսացված սնկային կենսաքայքայիչ կուլտուրաների բնութագրում, քարտագրում և տվյալների բազայի մշակում, երկարատև պահպանում լիոֆիլիզացիայի եղանակով:	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 1000 շտամ:		
	Էքստրեմոֆիլ մանրէներ (ղեկավարներ՝ Ն.Ղազանչյան, Կ.Դարբինյան)	ինուլինազային և լակտազային ակտիվությամբ օժտված մանրէների հավաքածուի ստեղծում:	Նախատեսված է ստեղծել շուրջ 100 շտամ պարունակող հավաքածու:		
	Կաթնաթթվային բակտերիաներ և շաքարասնկեր (ղեկավար՝ կ.գ.թ. Կ. Չիտչյան)	- նոր հեռանկարային կուլտուրաների հավաքածուի ստեղծում, տվյալների բազաների մշակում:	Նախատեսված է ուսումնասիրել շուրջ 200 շտամ:		

	Մանրէների պահպանում (ղեկավարներ՝ կ.գ.թ. Կ.Չիտչյան, Մ. Կինոսյան, Ն.Ղազանչյան, Ն.Խաչատուրյան)	հավաքածուի պահպանում կենսունակ վիճակում	Նախատեսված է պահպանել շուրջ 5000 շտամ:		
		պարբերաբար վերացանքսեր, մաքրության և կենսունակության վերարտադրողականության ստուգում, եռամսյակը մեկ անգամ՝	Սնկեր-կենսաքայքայիչներ՝ 500 շտամ, Շաքարասնկեր՝ 500 շտամ, Կաթնաթթվային և այլ ոչ սպորավոր բակտերիաներ՝ 400 շտամ:		

Ընդամենը՝ 15.124.000 (Տասնհինգ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" գիտաարտադրական կենտրոն

Տնօրեն՝ Ա. Սաղյան

Հավելված 3
«29» 01 2015 թ.
N 24-2 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման ու զարգացման՝
"Մանրէների Ազգային Հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը" ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Սաղյան-ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» 01 2015թ. N 24-2 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 15.124.000 (Տասնհինգ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն	ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" գիտա-արտադրական կենտրոն ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	ք. Երևան, Գյուրջյան 14
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Հ/հ 11500769896800 ՀՎՀՀ 00871944
Նախագահ Ռ. Մարտիրոսյան	*Տնօրեն* Ա. Սաղյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4
«29» 01 2015թ.
N 21-2 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

№№ ը/կ	Ծախսերի հոդվածների անվանումը	Ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1.	Աշխատավարձ, այդ թվում հարկեր և վճարներ	11236,6	2247,32	2809,15	2809,15	3370,98
2.	Տնտեսական և այլ ծախսեր	3887,4	777,48	971,85	971,85	1166,22
3.	Ընդամենը	15124,0	3024,8	3781,0	3781,0	4537,2

Տնօրեն՝ Ա. Սաղյան

Գլխ. հաշվապահ՝ Տ. Սոլոմոնյան

Կ.Տ.